ԶՈՒՅՑԵՐԻԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

(Զուիցերիայի 600-ամեայ տօնի առիթով)

ՄԿՐՏ. ՄԱՆՈՒՉԱՐԵԱՆԻ

Ի նկատի ունենալով այն մեծ բարգաւաճումը, որին կարողացել է հասնել Զուիցերիան քաղաքակրթութեան զրեթէ բոլոր ճիւղերում և այն մեծ համակրանքը, որ նա վայելում է ամբողջ աշխարհում, օգտուում ենք այդ երկրի դաշնակցութեան 600-ամեայ տօնախմբութեան առիթից, ներկայացնելու համար «Մուրճ»-ի ընթերցողների առաջ այդ զարմանալի երկրի քաղաքական կազմակերպութիւնը։ Տօնը կատարուեց օգոստոսի 2-ին ամենամեծ շուքով, և նա արձագանք գտաւ ամբողջ աշխարհի մամուլի մէջ։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Հասարակական իրաւունքը [1]) որոշում է երկու տեսակ դաշնակցութիւն. Դաշնակից պետութիւն (L'état fédératif) և Պետութիւնների դաշնակցութիւն (La confédération des états)։

I. Դաշնակից պետութիւն ասելով, պէտք է հասկանալ քաղաքական այն կազմակերպութիւնը, դաշնակցական այն ձևը, որի բաղկացուցիչ իւրաքանչիւր պետութիւնը, առանձին առած, ունի իւր ներքին ինքնօրինութիւնը (autonomie)։ Նա կարող է անկախօրէն կառավարել երկիրը, հարկ

---

[1]) Հասարակական իրաւունք գոյն եմ ածում Droit public բառի մոքով, որի առաջին կազմում է այլ և այլ պետութիւնների իրար և նոցա ու անհատների մէջ եղած յարաբերութիւնները։ Դրան բաժանում ենք 2 ճիւղի. a) Հասարակական արտաքին իրաւունք (Droit public externe) կամ այլապէս միջազգային իրաւունք (Droit internationale), որի առաջին տէրութիւնների մէջ եղած յարաբերութիւնները է և b) Հասարակ. ներքին իրաւունք (Droit public interne) որի մասերն են կազմում 1) սահմանադրական իրաւունք Droit constitutionel) և 2) վարչական իրաւունք (Dr. administratif)

հաւաքել. ունի օրէնսդիր, գործադիր և դատաստանական իշխանութիւն։ Ներքին այլ մեծ խնդիրներում նա անկախ է, որքան այդ թոյլ է տալիս դաշնակից սահմանադրութիւնը վերաքննութեան ենթարկել. իսկ ինչ վերաբերում է արտաքին խնդիրներին, դաշնակցութիւնը մի անբաժան ամբողջութիւն է կազմում։ Նման դաշնակցութեան զաղափար առաջին անդամ արծարծեց Ալէքսանդր Համիլտոնը, որը ընդունեց նախ Ամերիկայի Միացեալ Նահանգներում. իսկ այնտեղից անցաւ Եւրոպա։ Երկրորդ ձևի դաշնակցական կազմակերպութիւնը (Պետութիւնների դաշնակցութիւն) այն է որ իւրաքանչիւր դաշնակից պետութիւն կատարեալ մի անկախ պետութիւն է։ Նա կարող է օտար պետութիւնների հետ անկախօրէն դաշն կապել, ունենալ ինչ ձևի վարչական եղանակ կամենում է, նոյն իսկ պատերազմ հրատարակել, հաշտութեան դաշն կապել։ Այստեղ կենդրոնական մի մարմին գոյութիւն չունի, որին համերաշխաբար մասնակցեն բոլորը, լօղակցելով իրանց գերիշխանութիւնը, ինչպէս առաջին եղանակում։ 1815 թուին Վիէննայի կոնգրէսում, Մետերնեխի մտքի անմիտ ստեղծագործութիւնը, այն հրէշը, որ գերմանական պետութիւնների դաշնակցութիւն էր կազմում, տիպ էր այդ ձևին, ուր Աւստրիան և Պրուսիան իրանց ձեռքն էին առել սէյմը։

Զուիցերական դաշնակցութիւնը ոմանք դասաւորում են երկրորդ, ոմանք առաջին կարգին։ Ցիրաւի է որ Խոնապարտը, acte de médiation-ով խառնեց իւր մատը և նորա ցանկութիւնն էր երկրորդի կերպարանքը տալու, որը իւր նպատակներին աւելի համապատասխան էր, ուզենալով թուլացնել դաշնակցութիւնը։ Վիէննայի 1815-ի կոնգրէսը նոյն ձգտումն ունէր. բայց Զուիցերիան վաղուց անտի չի սիրում և նա տանել չի կարող, երբ օտարները իրանց քթով ներս են խցկում իւր ընտանեկան գործերում և ոչ իսկ կոյր աչքով է նայում դիմակաւոր բարեկամի արած շնորհքներին։ Առայժմ բաւականանանք ասելու, որ 1848-ի սահմանադրութիւնով նա հակւած է ֆեդերատիւ ձևին. իսկ 1874-ի սահմանադրութիւնից յետոյ, նա խառն ռամկական (mixte) դաշնակից պետութիւն է [1]։

---

[1]) Որոշւում է 3 ձևի ռամկապետութիւն—I անմիջական, II միջնորդական կամ ներկայացուցչական և III խառն (mixte)։

I. Անմիջական ռամկապետութիւն ասում են վարչական այն տեսակ կազմակերպութեան, ուր ժողովուրդը անձամբ վարում է իւր գերիշխանութիւնը, այսինքն վարչութիւնը պատկանում է ամենքին։ Անմիջական ռամկապետութիւն էր օր. Աթէնքի հասարակապետութիւնը. իսկ մեր օրերում զուիցերական մի քանի կանտոնները։

II. Միջնորդական ռամկապետութիւնը աւելի նոր ժամանակներին է պատկանում։ Այդ ձևը ծնունդ առաւ Հիւսիսային Ամերիկայում։ Այդ ձևի յառաջանալու դլխաւոր շարժառիթներն էին՝ երկրի ընդարձակ տարածութիւնը և ժողովրդի մեծ բազմութիւնը, որոնք քաղաքական կենտրոնից շատ հեռու սփռւած

Մի կողմ թողնելով նորա քաղաքական ինչ աստիճան ունենալը, կ'անցնեմ սահմանադրութեան։ Իսկ ինչ պէտք է հասկանալ սահմանադրութիւն ասելով։ Մի քանի խօսքով ալսպէս կարելի է բացատրել։ Սահմանադրութիւնը՝ մի ժողովրդի ընդհանուր կամքի արտալայտութիւնն է, որով սահմանւում են կանոններ, ապահովելու և պաշտպանելու անհատին՝ տէրութեան դէմ, տէրութիւնը՝ անհատի և անհատին՝ վարչութեան դէմ։ Եթէ այդպէս է, ապա ուրեմն և նա անփոփոխ չի կարող մնալ. այլ համաձայն հասարակութեան քաղաքակրթութեան և զարգացման (évolution), սահմանադրութիւնն ևս պէտք է փոխուի, ժամանակի պահանջներին համապատասխան։ Դալոց սերնդի համար ալսօր մենք կարող չենք և իրաւունք էլ չ'ունենք որ և իցէ մի կանոն դնելու, որը ալսօր կարող է ժամանակի պահանջները լրացնել. իսկ ով կարող է երաշխաւորել, որ նա ապագալում մի կատարեալ աբսուրդ չի լինի. և բացի ալդ, ինչպէս կարող ենք ալսօր պահանջել, որ լետագալ սերունդները ենթարկւեն մեր կամքի արտալայտութեան։ Եւ արդարև Զիւցերիայի դաշնակցութիւնը, մինչ ներկալ դրութեան հասնելը, երկար փոփոխութիւնների է ենթարկւել։ Եւրոպալում, նամանաւանդ իւր հարևան Ֆրանսիալում տեղացող քաղաքական դէպքերի և տիրող դաղափարների աղդեցութեան ներքոյ։

Սրեք գլխաւոր շրջանների կարելի է բաժանել նորա պատմութիւնը.

1-ին . . . . . 1291—1798 թ.

2-րդ . . . . . 1798—1803 թ. և

3-րդ . . . . . 1803 ից մինչ ներկալ ժամանակը։

Առաջին շրջանում դաշնակցութեան մասնակցում են նախնական երեք լեռնական կանտոնները՝ Շուից, Ուրի, Ունտէրվալդէն, որոնք նախկին

լինելով, անկարող էին համախմբւել։ Այդ արդելքներից ստիպած, ժողովուրդը, պահպանելով իւր գերիշխանութիւնը, կառավարութիւնը յանձնում է իւր ընտրած ներկայացուցիչների ժողովին։ Այդ ձևի գլխաւոր օգուտը կայանում է նրանում, որ ժողովուրդը կառավարւում է իւր սեփական պաշտօնեաներով և օրէնքներ ստանում իւր յատուկ ներկայացուցիչներից, որոնք և վերատեսչում են վարչութիւնը։ Պէտք է ասած, որ երկու սիստեմ կայ ընտրողութեան. 1, երբ ներկայացուցիչները ընտրւում են ուղղակի ժողովրդից և 2-դ՝ մի ջնորդական ընտրողութիւն, երբ ժողովրդից ընտրւած երեսփոխանները երանց քւէով ընտրում են ներկայացուցիչներին։

III խառն (mixte, ուամկապետութեան կարակտէրը որոշւում է առհասարակ սահմանադրական կանոնների քւէարկութիւնով։ Դա միջին տեղն է բռնում միջնորդական և անմիջական ուամկապետութեան։ Օր., Զիւցերիայում սահմանադրութիւնը քւէարկւում է անմիջապէս ժողովրդից, որով ազգային կամքը արտայայտում է կատարեալ կերպով։ Իսկ այդ գոյութիւն չ'ունի ներկայացուցչական ուամկապետութեան մէջ, ուր ներկայացուցիչների ժողովին է յանձնւած այդ իրաւունքը։

միութիւնը նորոգում են 1291 թ. մի նոր պայմանով։ 1332-ից սկսած 3 միաբան կանտոններին միանում են՝ 1332 թ-ին Լիւցէրն, 1351-ին Ցիւրիխ քաղաքը, 1352 թ. Ցուգ և Գլարիս, իսկ 1358-ին Բէրն քաղաքը։ Միաբան կանտոններից իւրաքանչիւրը բոլորովին գերիշխան էր, թէև դաշնակցութիւնը ունէր մի տեսակ գերիշխանութիւն։ Օրինակ. 1443 և 1444-ին դաշնակից կանտոնները զէնքով ստիպում են Ցիւրիխին, հրաժարուելու Աւստրիայի հետ կապած պայմանից։ 1481-ին կոնստանցի ժողովը վճռում է արգելել օտարների խառնուելը իւր գործերում։ Այդ ժողովից յետոյ, միանում են Ֆրիբուրգ և Սոլոդուրն, 1501-ին Բազէլ և Շաֆհաուզէն. իսկ 1513-ին Ապենցէլ։ Այդ շրջանում կային աղնուական հասարակապետութիւններ և ռամկական հասարակապետութիւններ։ Գիւղական աշխատաւոր դասը, բացի մի քանի կանտոններից, միւսներում զուրկ էր իրաւունքներից։ Քաղաքների բնակիչները իրանց ձեռքն էին հաւաքել կանտոնի վարչութիւնը և վարում առանց ժողովրդի մասնակցութեան։ Մի կողմից այդ, միւս կողմից օրաւուր աճող կրօնական երկպառակութիւնները առիթ էին տալիս ժողովրդի դժգոհութեան, մինչև որ վրայ է հասնում ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը (1789 թ-ին), որի ազդեցութեան ներքոյ հին սահմանադրութիւնը ընկնում է 1798 թ-ին։ Բազէլեան կոչած ակտով (acte) 1898-ի սահմանադրութեան փոխարինում է 1801-ին հոկտեմբերի 25 նոր սահմանադրութիւնը, որով Զուիցերիան ստանում է «Հելվետական մի և անբաժան հասարակապետութիւն» կոչումը։ Այդ սահմանադրութիւնով ճանաչւում է ժողովրդի գերիշխանութիւնը և հաւասարութիւնը. իսկ դաշնակից կանտոնների նուաճած երկիրները—Վօ (Vaud), Թիւրգովի և Թէսին աղատւում են, միանալով դաշնակցութեան հետ հաւասար իրաւունքներով։ Հազիւ երկու տարի գոյութիւն ունենալուց յետոյ, 1803-ին, Բոնապարտը, (դեռ կոնսուլ) կազմում է acte de médiation-ով նոր սահմանադրութիւն 19 կանտոններից բաղկացած դաշնակցութեան համար։ Այդ սահմանադրութիւնով ժողովուրդը զրկւում է իւր գերիշխանութիւնից։ Բոնապարտի անկումից յետոյ, 1815 թ. հանդէս է գալիս Վիէննայի կոնգրէսը, իւր քաղաքական հաւասարակշռութեան սկզբունքով, նոր կազմակերպութիւն տալու Եւրոպային. (աղգերի իրաւունքները ոտնահար անելու)։ Դա իսկապէս դրստում է! Զուիցերիայի հոնքը դրստելու տեղ աչքն էլ է հանում հետը։ Այդ կոնգրէսում Զուիցերիան ճանաչւում է եւրոպական պետութիւնների շարքում, ինչպէս անկախ պետութիւն, չեզոք դիրքով (sic!) [1]) այն պայմանով, որ թոյլ կը տայ վանքերի աղատ գոյութիւնը և նման մի քանի

---

[1]) Դէպքերը ցոյց տուին, թէ ի՞նչ կերպ էր յարգւում նրաչէզոքութիւնը։ Թող նա պատրաստ չը լինէր պաշտպանելու, այն ժամանակը կ'երևար թէ Պրուսիան ի՞նչ կերպ կը վերաբերուէր դէպքին նրաչէզոքութիւնը «քաղաքական հաւասարակշռութիւնը» պահպանելու համար։

պալմաններ։ Այդ վերաժողովով միանում են դաշնակցութեան ժընէվի, Նիւշատէլի և Վալէի կանտոնները։ Ժողովուրդը կրկին կորցնում է իւր գերիշխանութիւնը, որին տեղի են տալիս կուսակցութիւնները և կանտոնները։ Սակայն չը նայած Վիէննայի կոնդրէսի գործ դրած միջոցներին, թէև նա ազատեց Զուիցերիային Բոնապարտից, բայց նա կարող չէր զերծ պահել նորան Ֆրանսիայում եփուող քաղաքական անցքերից և այրող զազափարների շարժումից։ 1830-ին և 48-ին Ֆրանսիայում կատարուած դէպքերը անհետեանք չ'անցան, այլ ընդհակառակը շատ խոր կերպով թողին իրանց հետքերը, բուռն կերպով արձագանք գտնելով Զուիցերիայում։ Ցառաջ են գալիս 1847-ին քաղաքային ներքին խռովութիւնները, որի հետեանքը եղաւ ռամկապետական սկզբունքների տարած փառաւոր յաղթանակը, իսկ դորա արդասիքը ռամկական սկզբունքների վրայ հիմնուած ու ամբողջ ազգի քւէարկութիւնով ընդունած 1848-ի սահմանադրութիւնը։ Դա, կարելի է ասել, ստեղծում է «Զուիցերական ազգութիւնը», ճանաչելով նորա գերիշխանութիւնը, որից զրկուած էր նա 1803-ի acte de médiation-ով և 1815-ի հաւասարակշռական քաղաքականութիւնով (Equilibre politique), որոնք Զուիցերիային պետութիւնների դաշնակցութեան ռէժիմին ենթարկեցին։

1848-ի սահմանադրութիւնը ճանաչում է ժողովրդի գերիշխանութիւնը, նորան մասնակից անելով՝

1. Պլէբեսցիտի [1]) միջոցով դաշնակցական սահմանադրութեան կազմելուն։

2. Ազգային խորհրդի միջոցով մասնակցում է օրէնսաւորութեան. իսկ 1848-ի սահմանադրութիւնը ժողովրդի քւէարկութիւնով։ Այդ սահմանադրութիւնով ժողովուրդը ստանում է նաև Ր Է Ֆ Է Ր Է Ն Դ Ո Ւ Մ [2]) (Referendum) (լօդ. 98—90. Դ. Ս.)։

Այստեղից երևում է, որ Զուիցերիան խառն (mixte) ռամկական կազմակերպութիւն ունի, այսինքն այն տեսակ մի վարչական եղանակ, ուր վարչութիւնը պատկանում է ամենքին, ուր ազգի կամքը սահմանում է օրէնքներ, ասել է դոյութիւն ունի բնական իրաւունքների հաւասարութիւնը, ուրեմն և բոլոր քաղաքացիների հաւասարութիւնը. այդտեղից հետևում է, որ հասարակական պաշտօնները ոչ արտօնութիւն և ոչ իսկ սեպհականութիւն են այս կամ այն անհատի կամ խումբ անհատ-

---

[1]) Plebiscite (պլէբիսցիտ) կոչւում է ընդհանուրի անմիջական քուէարկութիւնը սահմանադրութեան կամ սահմանադրական օրէնքների։ Խաւն ռամկապետութեան յատկանիշ կողմերից մէկն էլ պլէբիսցիտն է։

[2]) Referendum (ռէֆէրենդում) ամբողջ ազգի անմիջական քուէարկութիւնը ոչ սահմանադրական օրէնքների, որի միջոցով ժողովրդի Ձայների մեծամասնութիւնով ընդունւում է կամ հերքւում օրէնքը (ոչ սահմանադրական)։

ների, այլ խօսքով ազգը ինքը գերիշխան է, այն ազգը, որը բաղկացած է տարբեր ծագում ունեցող, տարբեր լեզուներով իւր միտքը արտայայտող և, եթէ ուզում էք, աւելի քան տարբեր կրօնները դաւանող, երկք տարբեր էլէմէնտներից—գերմանացիներից, ֆրանսիացիներից և իտալացիներից։ Եւ այդ տարբեր էլէմէնտները, ներկայացնում են մի անբաժան, ուժեղ և, եթէկամենում էք՝ «մոլեռանդ» ազգութիւն—նոքա «զուիցերացի» են։

Փորձեցէք մաքուր ֆրանսերէն խօսող ժընեւացուն, կամ նիւշատելցուն ֆրանսիացի անուանելու, սխալմամբ թէ սինցուն՝ իտալացի իսկ բէրնցուն գերմանացի կոչէք, նոքա բոլորն էլ կը վիրաւորուեն և շատ վատ կը վիրաւորուեն. «մենք զուիցերիացի ենք, ներեցէք, կը նկատեն ձեզ։ Եւ այդ շատ հասկանալի է, քաղաքական կեանքի տարբեր խաւերը, որոնցով Զուիցերիան անցել է, ազատութեան փառաւոր լաղթանակներով լի պատմական անցեալը, ալսօր աւելի խորն են արմատացրել այդ տարբեր էլէմէնտներում «ազգութեան» գաղափարը, քան ուր է իցէ։ Թէ ալապէս, թէ ալնպէս, նա ալսօր փոքրիկ, սակայն ուժ ունեցող գերիշխան մի ազգութիւն է, այն ևս կազմակերպւած մի ազգութիւն։—Տեսնենք դաշնակցութեան կազմակերպութիւնը 22 կանտոններից բաղկացած խառն ռամկապետութեան։

Իւրաքանչիւր մի կանոնաւոր տէրութիւն ունի երեք իշխանութիւն (pouvoir).—օրէնսդրական, գործադիր և դատաստանական։ Առաջին անգամ պետութեան այդ երեք իշխանութիւնների բաժանումն ձևակերպեց նոր դարումս Մօնտեսքիօն (Montesquieu)։ Հիւսիսային Ամերիկայի սահմանադրութիւնը առաջինը ներս մուծեց այդ գաղափարը, իսկ այժմ գրէթէ բոլոր ներկայացուցչական պետութիւնները ընդունել են այդ սկզբունքը—երեք իշխանութիւնների բաժանումն։ Նոքը ընդունել է, ինչ ասել կ'ուզէ, նաև Զուիցերիան։ Ուրեմն դաշնակից պետութիւնը ունի երեք իշխանութիւն։

I Օրէնսդրական իշխանութիւն, որը պատկանում է դաշնակից ժողովին (assemble fédérale)։

II Գործադիր իշխանութիւնը պատկանում է դաշնակից խորհրդին (conseil fédéral)։

III Դատաստանական իշխանութիւն, որը կազմում է դաշնակից ատեանը (tribunal fédéral)։

A. ՕՐԷՆՍԴՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ (pouvoir législatif)

Օրէնսդրական իշխանութիւնը պատկանում է, ինչպէս ասացի, դաշնակից ժողովին, որը ներկայացնում է կազմակերպւած ազգու-

թիւնը։ Դաշնակից ժողովի (օրէնդր. իշխանութեան) կազմութեան հարցը, ամենալուրջ հարցերից մէկնէ, նամանաւանդ դաշնակցական ձև ունեցող պետութիւններում։ Այդ՝ իշխանութեան կազմութիւնից է կախուած դաշնակիցների գերիշխանութեան հաւասարակշռութիւնը։ Դաշնակից ժողովը, որը ալ երկիրներում պարլամէնտ է կոչւում, լինում է կամ մի կամ երկու պալատներից բաղկացած։ Ոմանք ընդունում են մի պալատից, ոմանք երկու պալատներից բաղկացած պարլամէնտական սիստեմը։ Մի կողմ թողնելով առաջիմ իրաքանչիւրի առաւելութիւնը, բաւականանամ ասելու, որ երկար ժամանակների փորձերը ցոյց են տուել, որ երկրի արդի կացութիւնով, երկու պալատներից բաղկացած պարլամէնտով, կարելի է, նամանաւանդ դաշնակից պետութիւններում, պահպանել իրաքանչիւրի գերիշխանութիւնը (souveraineté) և տեղիք չը տալ մէկը միւսին ստորադրելու։ Մինչ 1848 թւականը Զուիցերիայում պարլամէնտը բաղկացած էր մի պալատից, որի հետևանքն այն էր, որ մի քանի խոշոր կանտոններ վերատեսուչների դեր էին խաղում դաշնակցութեան մէջ։ Եւ այդ շատ հասկանալի է, եթէ ի նկատի ունենանք, որ մի քանի կանտոններ, ինչպէս են՝ Ցիւրիխ, Սէն-Գալը, Լիւցերն, Բէրն, Վ.օ (Vaud) և Արգաու միասին աւելի շատ թուով ժողովուրդ ունեն քան միւս կանտոնները միասին առած, որոնցից մի քանիսը, ինչպէս ասում են՝ մէկ թիզ տարածութիւն ունեն երկու զուգ ժողովրդով [1]։

---

[1]) Կանտոնները թուով 22, իսկ կիսա-կանտոններով հաշուած՝ 25։

Ապպէնցել (արտաքին)			21,841	բնակիչ։
Աբգովի	140,4	քառակուսի կիլոմէտր	198,645	»
Բազէլ (քաղաք)	358	»	65,101	»
Բազէլ (գիւղական)	421,6	»	59,271	»
Բէրն	688,9	»	1,902,167	»
Ֆրիբուրգ	166,9	»	115,400	»
Սէն-Գալլ	201,9	»	210,491	»
Ժընէվ	274,4	»	101,633	»
Գլարիս	691,2	»	34,213	»
Դրիզոն	718,5	»	93,864	»
Լիւցէրն	1500,8	»	134,806	»
Նիւշատէլ	809	»	104,378	»
Ապպէնցել (Ներքին)	241,1	»	51,958	»
Շաֆհաուզէն	294,2	»	38,384	»
Շվից	908	»	51,535	»
Սոլէօր (Soleure)	783,6	»	209,920	»
Թէսսին	211,8	»	130,777	»
Թիւրգովի	388	»	99,285	»
Ունտերվալդէն (վերին)	474,4	»	15,356	»
Ուրի	108,6	»	23,694	»

Պարլամէնտը մի պալատից բաղկացած լինելով, ուր իւրաքանչիւր մի կանտոն ուղարկում էր ժողովրդի թւի համեմատ ներկայացուցիչներ [1]), մեծ կանտոնները պէտք է տային և շատ թւով ներկայացուցիչներ, քան փոքրիկ կանտոնները, իսկ այդ այդպէս լինելով, պէտք է, որ հաւասարակշռութիւնը խախտուէր, նամանաւանդ, երբ ներկայացուցիչները հրահանգ էին ստանում ընտրուած կանտոնից. Այդ չարիքի առաջն առնելու համար, Ժընէւի քաղաքացի Ժամս Ֆաղիի առաջարկութեամբ ընդունուում է երկու պալատներից բաղկացած պարլամէնտական սիստէմը, որը և գոյութիւն ունի այժմ. Պարլամէնտի մի պալատը կոչւում է ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ (conseil national), որը ներկայացնում է ամբողջ ազգը. միւսը ՊԵՏՈՒԹԵԱՆՑ ԽՈՐՀՈՒՐԴ (conseil des états), որը ներկայացնում է պետութիւններին.

Երկու պալատների ներկայացուցիչներն ես ընտրում են ժողովրդից, 3 տարի ժամանակով. Պետութեանց խորհուրդի համար կամ անմիջապէս և կամ կանտոնական վարչութեան միջնորդութեամբ, իսկ ազգային խորհրդի անդամները անմիջապէս, առանց բացառութեան.

Իւրաքանչիւր կանտոն իրաւունք ունի միմիայն 2 ներկայացուցիչ ունենալու պետութեանց խորհրդում [2]). ազգային խորհրդի անդամները ընտրուում են այժմ ես 20,000 հոգուն մի ներկայացուցիչ. Ներկայացուցիչները թէ ազգային և թէ պետութիւնների խորհրդի ոչ մի հրահանգ ստանալ չեն կարող (գոդ. 91. Դաշնակից Սահմանադրութեան).

Ազգային խորհրդի անդամները վարձք ստանում են գաշնակցութեան գանձարանից. իսկ պետութեանց խորհրդի անդամները իւրաքանչիւրը այն կանտոնից, ուր ընտրած է.

Այդ երկու պալատները միանալով կազմում են պարլամէնտը (դաշնակից ժողովը), որի անդամները դիցերական ամբողջ ազգութեան ներ-

---

Վալէ	524,7	»	100,211	»
Վ. (Vaud)	3222,3	»	238,730	»
Ցուգ	239,2	»	65,000	»
Ցիւրիխ	172,4	»	479,101	»
Ունտէրվալդէն (Ներքին)	290,5	»	11,992	»

1880 Թւականի ժողովրդագրութիւնից.

[1]) Քսան հազար (20,000) հոգուն մի ներկայացուցիչ. այն կանտոնները, որոնք պակաս թւով ժողովուրդ ունեն, այնու ամենայնիւ ուղարկում են մի ներկայացուցիչ.

[2]) Կանտոնները 22 են. Մի քանի կանտոններ բաժանուել են, օր. Բազէլը—քաղաքի և գիւղական (Bâle ville et Bâle campagne), Ունտէրվալդէնը—վերին և ներքին, Ապենցել արտաքին ու ներքին. Դաշնակցութիւնը ճանաչում է բաժանուած մասերին ինչպէս անկախ կանտոններ, միայն պետութեանց խորհրդում 2 ներկայացուցիչ ուղարկելու իրաւունք չունեն, այլ կարող են իւրաքանչիւրը մի ներկայացուցիչ ունենալ.

կալացուցիչներն են [1]) և ոչ այս կամ այն կանոնի։—Պարլամէնտը իւր նիստերը սկսում է լունիսին։ Երկու պալատները նոյն օրը նիստ ունեն։ Որևիցէ մի օրինագիծ նախ քան դաշնակից խորհրդին (գործադիր իշխանութիւն) ուղարկելը հրատարակելու համար (pour promulgation) պէտք է քննի և ձայների առաւելութեամբ հաւանութիւն ստանի երկու պալատներում ևս։ Դործերը վճռւում են ձայների մեծամասնութեամբ, իսկ իւրաքանչիւր պալատի նիստը վաւերական է, երբ անդամների մեծամասնութիւնը ներկայ է (սենատեանց խորհուրդը 145 անդամ)։ Պալատների մէջ առաջնակարգութիւն (priorité) չկայ։ Որ պալատում մի գործ առաջ վճռւեց՝ ուղարկւում է միւսին, ուր ևս պէտք է հաւանութիւն ստանի. իսկ մինչ համաձայնութիւն չը կայանալ երկու պալատներում, գործադիր իշխանութեան չի ուղարկւում։

Պարլամէնտը կարող է նաև արտաքոյ կարգի նիստեր ունենալ, եթէ 5 կանտոններ այդ ցանկանում են, կամ երբ ազգային ժողովի անդամների $^1/_4$ը և գործադիր իշխանութիւնը ցանկանում են։

Պալատներից իւրաքանչիւրը ունի մի նախագահ մի և փոխ նախագահ, որոնց ընտրում են իւրաքանչիւր պալատը իւր համար։ Նախագահը նիստերին է նախագահում և երբ ձայները հաւասար են բաժանւած՝ նա վճռող ձայն ունի։

Պարլամէնտի իրաւունքները և պարտաւորութիւնները։

Դաշնակից ժողովը (պարլամէնտը) միմիայն իրաւունք ունի պատերազմ հրատարակել, հաշտութեան դաշն կռել, ճանաչել օտար պետութիւններին, ինչպէս իրաւաբանական անհատների։ Նա է ընդունում դիպլոմատիկական գործակալներին և նշանակում դեսպաններին, իսկ երկրորդական հարցերում կանտոններն ևս կարող են օտար հարևան պետութիւնների հետ յարաբերութիւն ունենալ, եթէ սահմանադրութիւնը թոյլ է տալիս։—Նա է միջոցներ ձեռք առնում երկրի արտաքին վտանգների առաջն առնելու և ներքին խաղաղութիւնը ու կանտոնների սահմանադրութիւնները պաշտպանելու։ Ամէն կանտոն, ինչպէս ինքնօրէն պետութիւն, կարող է իւր սահմանադրութիւնը վերաքննութեան կամ փոփոխութիւնների ենթարկել միմիայն հետևեալ պայմաններով, որոնց խստիւ հսկում է դաշնակցութիւնը։ 1-ին, նոր սահմանադրութիւնը չը պէտք է դաշնակցական սահմանադրութեան հակասէ։ 2-րդ, պէտք է ունենայ ռամկապետական ձև։ 3-րդ, ընդունւի կանտոնի ժողովրդի ընդհանուր քւէով։ 4-րդ, պարունակէ մի յօդւած, որը թոյլ է տալիս սահմանադրութեան վերաքննութիւնը, եթէ կանտոնի ժողովրդի մեծամասնութիւնը այդ ցանկանում է։ Ուստի

---

[1]) Ընտրւել կարող են բոլոր զուիցերիացիք, 20 տարեկանից վեր, բացի 8 հոգևորականներից, որոնք զրկւած են թէ ընտրելու և թէ ընտրւելու իրաւունքից։ (յօդ. 75. Դ. Սահմ.)։

կանտոնը, նախքան նոր սահմանադրութիւն գործադրելը, պէտք է ներկայացնէ դաշնակից ժողովին, որի հաստատութիւնից յետոյ ապա թէ կարող է գործադրուել։

Կարեւոր դէպքում, եթէ վտանգներ են սպառնում սահմանադրութեանը, դաշնակից ժողովը կարող է մինչեւ իսկ զինուորական պաշարման ենթարկել այս կամ այն կանտոնը եւ զէնքի միջոցով կարգը վերականգնել [1]։ Ինչպէս օրինակ. Նուշատէլի իշխանականների (royalistes) փորձերը casus foederis էր դաշնակից ուժի միջամտութեան։

Ասացի, որ Դաշնակցութիւնը պաշտպանում է երկիրը արտաքին եւ ներքին վտանգներից. ուրեմն կարող են թերեւս մտածել, որ նորա ձեռքումն է գտնւում երկրի ամբողջ պատերազմական ուժը։ Կը սխալուեն այդպէս մտածողները։ Դաշնակից ժողովի կարգադրութեան ներքոյ է նա, սակայն ոչ թէ գտնւում է անմիջականապէս նորա ձեռքում։ Պատերազմական կենտրոնացած ուժը այնքան էլ թեթեւ խնդիր չէ, մանաւանդ դաշնակցական պետութիւններում, որ նորա վերայ թեթեւ նայէր զուիցերացին։ Նա մտածում է, եթէ մշտական բանակ պահէ, այդ շատ թանգ կը նստէ ժողովրդին եւ, բացի այդ. բանակը գտնուելով կենտրոնական իշխանութեան ձեռքում, նա կարող է ի չարը գործադրուել, կանտոնների իրաւունքները արհամարհելով, ինչպէս այդ տեղի է ունենում այլ տեղերում. իսկ թողնել, որ կանտոններից իւրաքանչիւրը իւր պատերազմական ուժերը գործադրէ, այդ էլ այլ չարիք կը յառաջացնէր։ Փոքրիկ կանտոնները կ'ենթարկուէին մեծ կանտոններին։ Ահա նա ինչ է վճռում. (յօդ. 13. Դաշնակց. Սահմանադր.)՝ Մշտական բանակ դաշնակցութեան մէջ գոյութիւն չունի. իսկ ամեն մի կանտոն առանձին կարող չէ 300 մարդուց աւելի ունենալ։

Ի՞նչպէս մշտական բանակ չը կայ, ուրեմն նորա պատերազմական ուժը շատ թոյլ պէտք է լինի ու զինուորական արհեստը ընկած, կը մտածեն անշուշտ։ Փոքրիկ բանակը շատ ու շատ ուժեղ է. իսկ այդ նացոյց տւեց Պրուսիայի հետ ունեցած ընդհարումով եւ ցոյց կը տայ, եթէ դէպք պատահի։ Չը նայած, որ մշտական բանակ գոյութիւն չունի, այնուամենայնիւ, նորա բանակում կարգ ու կանոնը, դիսցիպլինան եւ զինուորական մարզողութիւնները հասնում են այն աստիճանին, որքան անհրաժեշտ է այդ, եւ այդ խոստովանւում են նոյն իսկ օտար պետութիւնների աստիճանաւորները, որոնք առիթ են ունենում ներկայ գտնուելու զուիցերական բանակի տարեկան զօրահանդէսներում։ Իսկ գիտես, յարգոյ ընթերցող, այդ ամենը ժողովրդին նստում է շատ չնչին մի գումար։

---

[1] Ինչպէս այդ նորերս տեղի ունեցաւ Թեսսին կանտոնի նկատմամբ, ուր ապստամբութիւն էր ծագել։

Ծանօթ. Խմբ.

Մի բացատրութիւն կարելի է տալ. ինչու զուիցերական ոչ մշտական փոքրիկ բանակը (մօտ 200.000) այնքան ույժ ու վարժութիւն, դիսցիպլինա ունի։ Մի կողմ թողած բազմաթիւ մարմնամարզական ընկերութիւնները (մի քանի հարիւրի է հասնում), որոնք տարածուած են երկրի ներսը, մի կողմ թողած այդ, կրկնում եմ, զուիցերական զինուորը, կամքից զուրկ մի մսի գունդ չէ, այլ նա զինուորական ծառայութիւնը կատարում է գիտակցաբար, հայրենիքի անկախութեան պաշտպան լինելու, և ոչ թէ օտար ազգերի անկախութիւնը ոտքին տակը տալու համար. ահա ինչու տարեկան մի քանի շաբաթ միմիայն գտանուելով բանակում, նա ձեռք է բերում այն, ինչ այլ ուր մի քանի տարիների ընթացքում չեն կարողանում։—Ո՞վ եղել է Զուիցերիայում, և չի տեսել թէ ինչպէս քաղաքացիները խումբ-խումբ գարնան հաւաքւում են զինուորանոց ուրախ տրամադրութեան ներքոյ, և մի քանի շաբաթ մնալով գնում են, տեղ տալով ուրիշներին։ Ով եղել է զուիցերական համալսարանում և հեռու չէ պահել իրան տեղացի ուսանողներից, մօտիկացել է, ապա անշուշտ նա գիտէ, ինչ անհամբեր սրտով սպասում են ուսանողները ամառնային սեմեստրին, երբ զինուորական ծառայութիւն պէտք է կատարեն, զինուորի օֆիցիէ կամ այլ աստիճանով, հայրենիքի պաշտպանութեան պատրաստուելով։

Երանի այն ազգին, որ գիտէ պաշտպանուել։ Ամեն քաղաքացի 20 *տարեկանից իրաւունք ունի ընտրելու և պարտաւոր է զինուորական ծառայութիւն կատարել. արտօնութիւն գոյութիւն չունի (յօդ.* 18 *և* 4. Դ. Ս.)։

Պարլամէնտը նշանակում է բանակի ընդհանուր հրամանատարը և շտաբի գլխաւորը։ Նա՛ (պարլամէնտը) իրաւունք ունի զինուորական ուսումնարաններ հիմնել և կրթել. արտիլլէրիան նրան է վերաբերում։ Պարլամէնտը ունի իւր դրամարկղը. ծածկելու ծախսերը։ Նորա տարեկան եկամուտը հասնում է... (չը ծիծաղես ընթերցող) 300,000—1,000,000 *ֆրանկի։*

Նա իրաւունք ունի մի համալսարան ու մի պօլիտեխնիկում հիմնել (յօդ. 27. Դ. Ս.)։ *Վերջինս գտանւում է Ցիւրիխում. իսկ դաշնակցական համալսարանի հարցը օրուայ հարցերի կարգումն է. Նա արդէն վճռուած է, բայց դեռ ես տատանւում են ուր հիմնելու։ Շատ հաւանական է, որ ֆրանսիական կանտոններից մէկում հիմնւի և այդ ես Ժընէւ, որի համար տեղ մասին շատ աշխատում են Կարլ Ֆոխտի նման մարդիկ։*

(Դ. 49. յօդ.)՝ *դաշնակցութիւնը հսկում է, որ կանտոնները չ՛իցէ թէ խույս տան տարրական ուսումը ձրի և պարտադիր կացուցանելուց և մի գուցէ ուսումնարաններում կրօնական էլէմէնտները մուտք գործեն։*

Նա պարտադիր է կացուցանում բոլոր կանտոններին և հետևեալ միջոցներով ապահովում ազգի և անհատի իրաւունքները. 1, *որ և իցէ մի կանտոնի*

քաղաքացին ազատ կարող է տեղափոխուել մի այլ կանտոն, ուր նա միւս քաղաքացիների հետ հաւասար իրաւունքներ է վայելում. օրէնքի առաջ խտրութիւն չկայ և ոչ մի արտօնութիւն գոյութիւն չունի Զուիզերիայում։

2) Ոչ մի կանտոն իրաւունք չ'ունի զրկել իւր քաղաքացիներից և ոչ մէկին քաղաքացիական իրաւունքից, ոչ ծագումի (droit d'origine) իրաւունքից և ոչ իսկ արտաքսել կարող է։

3) Կրօնի ազատութիւնը. խօսքի, մամուլի, հրապարակական ազատ ժողովների ազատութիւնը կատարեալ է և ոչ մի կանտոն այդ խախտել կարող չէ։

4) Ամեն քաղաքացի իրաւունք ունի խնդիրք ներկայացնելու կանտոնական և թէ դաշնակից իշխանութեան։ Նա պէտք է դատուի օրինաւոր և իւր սեփական դատարանով (46—59)։

5) Քաղաքական յանցանքների համար մահուան պատիժը գոյութիւն չ'ունի (լոզ. 65) ինչպէս և մարմնական պատիժը դաշնակցութիւնը մահուան պատիժը չէ ճանաչում [1])։

Իւրաքանչիւր կանտոնի դատարանի վճիռը պարտադիր է միւս կանտոնների համար։ Բացի քաղաքական յանցաւորներից, միւս յանցաւորներին կանտոնները պարտաւոր են յանձնել. եղիտների կարգը գոյութիւն ունենալ չի կարող և ոչ իսկ վանքեր հաստատելու իրաւունք կայ։

Նա միջոցներ է ձեռք առնում առանց հայրենիքի մարդկանց բնակեցնելու և նոցա յառաջանալու առաջն առնելու։

Երկար կը լինէր այստեղ թուել մի առ մի իրաքանչիւր լոզուածը. ամփոփենք դաշնակից ժողովի իրաւասութեան գլխաւոր կէտերը։

Նրան է պատկանում օրէնքներ և հրովարտակներ տալ դաշնակցութեան սահմանադրութիւնը իրագործելու։ Նա դաշնակցութեան պաշտօնեաների ռոճիկներն է որոշում, նոր պաշտոններ է նշանակում, (մի քանի բացառութիւնով)։

Դաշնակից ժողովն է ընտրում գործադիր իշխանութեան նախագահը, փոխ նախագահը, դաշնակից դատարանը և բանակի ընդհանուր հրամանատարը։

Զինուորական վարչութեան (շտաբի) գլխաւորին, դիպլոմատիկական ագէնտներին նշանակում, օտար պետութիւնների հետ յարաբերութեան մէջ մտնում։ Միջոցներ է ձեռք առնում երկրի անկախութիւնը, չէզոքութիւնը պաշտպանելու։ Ապահովում է կանտոնների սահմանադրութիւնը և երկրի ներքին խաղաղութիւնը։ Նա կարող է դաշնակից դատարանի դատապարտածներին ներումն շնորհել։ Զինուորական օրէնքներ է հրատա-

---

[1]) Պէտք է նկատենք, որ 1879-ից մի քանի կանտոններ մահուան պատիժը կրկին վերականգնեցին։

բակում, փոխառութիւն անում, փողի, կշռի չափի վերաբերեալ օրէնքներ տալիս, բիւջէտը կազմում. վառօդի մենաշնորհը նրան է պատկանում. հայմաթլոզների [1]) վերաբերեալ օրէնքները և օտարականների հակելը նրանց է պատկանում, ինչպէս և ազգային առողջապահութեան վերաբերեալ հրամանները և հասարակական աշխատանքները (travaux publics), *կանոնների մէջ ծագած վէճերը, եթէ քաղաքական բնաւորութիւն ունեն և այն հարցերը, որոնց մասին պէտք է որոշել՝ կանոնին է պատկանում թէ դաշնակցական գործադիր իշխանութեան.*

Վերջապէս դաշնակից սահմանադրութիւնը կարող է վերաքննութեան ենթարկուել. պէտք է նկատել, որ սահմանադրութիւնը կարելի է վերաքննութեան ենթարկել, եթէ պարլամէնտի պալատներից մէկը այդ ցանկանում է և կամ 50,000 քաղաքացիներ այդ ցանկանում են, և այդ վերաքննութիւնը տեղի կարող է ունենալ, երբ այդ առաջարկութիւնը ժողովրդին է անում և եթէ ամբողջ ազգութեան մեծամասնութիւնը այդ ցանկանում է. ապա նոր ընտրութիւններ են կատարւում պարլամէնտի համար, որոնք հաւաքուելով սկսում են սահմանադրութեան վերաքննութիւնը.

Իսկ քննուած, փոփոխուած սահմանադրութիւնը այն ժամանակ գործադրելի է, երբ ազգի մեծամասնութիւնը իւր քուէով ընդունել է այդ, և, բացի այդ, պէտք է, որ այդ մեծամասնութիւնը նաև կանտոնների մեծամասնութիւնը կազմէ (112—121).

Ինչպէս նկատում էք, ընթերցող, սահմանադրութիւնը իւր զուլութիւնով սահմանափակում է օրէնսդրական իշխանութեան իրաւունքները, որի շրջանակից հազիւ կարող է դուրս գալ և սահմանադրութեան հոգուն հակառակ օրէնքներ սահմանել. իսկ այդ կոնտրոլ է անում անմիջապէս ժողովրդից իւր Պլեբիսցիտով և Ռէֆէրէնդումով.

(Կը շարունակուի)

---

[1]) *Հայմաթլոզները* (Heimathlose) *կամ առանց հայրենիքի մարդիկ* (les gens sans patrie) *կոչւում են Զուիցերիայում նոքա, որոնց նախնիքը ինչ ինչ պատճառներով կորցրել են համայնքի անդամ լինելու իրաւունքը. դոքա թուով մի քանի 100-ի են հասնում.*